

ՄԱՐՏԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
MARTIN HARUTYUNYAN

ԲԵՄԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԵՎ ՇՎԵՅՏԱՐԻԱՅՈՒՄ

Եվրոպական երկրներում բավականին մեծ թիվ են կազմում դիտադաշիվային կառույցների հարուստ ժառանգություն ունեցող քաղաքները: Թեև չեն նշվում եվրոպական բեմական տեխնոլոգիաների զարգացման հստակ տարեթվեր, այնուամենայնիվ տասնյոթերորդ դարասկզբից ի վեր եվրոպական մի շարք թատերական շինություններ արդեն սկսել են կիրառել բեմական կարևորագույն, բայց պարզ տեխնոլոգիաներ (տես՝ Diderot & d'Alembert 2004):

Տեղային դիտարկումների առաջին փուլում մեր կողմից ուսումնասիրվել են հետևյալ թատերական կառույցները՝ Լիոնի ազգային օպերա (Լիոն), Պարերի տուն (Լիոն), Սելեստինս թատրոն (Լիոն), Քոլուա Ղուսս թատրոն (Լիոն), Մեծ թատրոն (Ժնև), Գրենոբլի քաղաքային թատրոն (Գրենոբլ), որոնցից առավել կարևորել և առանձնացրել ենք ավելի զարգացած ու բեմական նորագույն տեխնոլոգիաներով (տես՝ Garbagnati et Morelli 2006:5-13, 23-81) առավելապես հագեցած երկու կառույցներ՝ Լիոնի ազգային օպերան ու Ժնևի Մեծ թատրոնը:

Նշված երկու շինություններում էլ գրեթե յուրաքանչյուր քսանից երեսուն տարին մեկ կատարվում են փոփոխություններ՝ արդիականացվում և ձևափոխվում են բեմական տեխնոլոգիաները: Վերջին վերանախագծումն ու արդիականացումը/մոդեռնիզացիան/ իրականացվել է վերջերս:

Լիոնի Ազգային Օպերա

Արդեն մոտ երեք դար է, ինչ ֆրանսիական Լիոն քաղաքը համարվում է եվրոպայի առավել հայտնի թատերական շինություն ունեցող կենտրոններից մեկը: Լիոնի քաղաքային իշխանությունների կողմից հատուկ մշակված և հաստատված օրենսդրությամբ յուրաքանչյուր երեսուն տարին մեկ վերանայվել և թարմացվել են Ազգային օպերայի բեմական տեխնոլոգիաները: Ներկառումն նույնիսկ հպանցիկ հայացքով կարելի է նկատել, թե որքան մոդեռն է Լիոնի ազգային օպերայի բեմը և որքան արդյունավետ ձևով է այն ծառայում իր նպատակին:

Լիոնի ազգային օպերայում մեր սեփական հետազոտությունների ու դիտարկումների, ինչպես նաև բեմի տեխնոլոգիաների պատասխանատուների և մասնագետների հետ մի շարք հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ կառույցը նախագծվել և իր հետագա պատմության ընթացքում վերանախագծվել է երեք անգամ: Յուրաքանչյուր վերանախագծում հիմնովին փոխել և ավելի արդյունավետ է դարձրել կառույցի գործունեությունը (տես՝ Opera de Lyon 2011):

Ներկայումս Լիոնի ազգային օպերայի շենքն անցել է բեմական տեխնոլոգիաների գրեթե 100 տոկոսանոց ավտոմատացված համակարգի: Այն գերզինված և հագեցած է գերմանական և ավստրալական համակարգչային տեխնիկայով ու բեմական տարաբնույթ մասերի բազմաթիվ ու բազմազան ավտոմատացված տարրերով/էլեմենտներով: Քարշակները, որոնց ներկարությունը հասնում է մոտ 23 մ բարձրության, կարող են տեղափոխել մինչև 100 տեսակի տարբեր դեկորատիվ առարկաներ/օբյեկտներ, որոնք շարժվում են 1.5 - 2.5 մ/վրկ արագությամբ (նկ. 1): Բեմի դեկորների ու էլեմենտների տեղաշարժը կատարվում է համակարգչային օպերատորի հրահանգով՝ յուրաքանչյուր ներկայացման համար նախապես մշակված հատուկ ծրագրով: Նմանատիպ տեխնիկան հնարավորություն է տալիս միաժամանակ գործարկել մինչև հինգ տարբեր ներկայացումների համար պահանջվող ծրագրեր՝ դեկորների տեղաշարժ, բեմական մասերի փոփոխություն և այլն (ավելի մանրամասն տես՝ Ponzio Jean-Luc 2011):

Ինչպես Լիոնի ազգային օպերան, Ժնևի Մեծ թատրոնը ևս աչքի է ընկնումը բեմական նորագույն ավտոմատացված տեխնոլոգիական համակարգերով: Այստեղ նույնպես տեղական իշխանությունների մշակած և հաստատած հատուկ քաղաքականության շնորհիվ կառույցի բեմական տեխնոլոգիաները վերանայվում են գրեթե յուրաքանչյուր 30 -40 տարին մեկ: Ժնևի Մեծ թատրոնը, ի տարբերություն Լիոնի ազգային օպերայի, ամբողջությամբ չի անցել ավտոմատացված կառավարվող համակարգի: Ասվածից հետևում է, որ բեմական հատվածների, ինչպես նաև դեկորների տեղաշարժը իրականացնելու համար պահանջվում են նաև բեմական տեղնոլոգիաների մի շարք առանձին մասնագետներ՝ տեխնիկներ, բանվորներ և այլն: Բեմական այսպիսի տեխնոլոգիաների կիրառման համար պատասխանատու մասնագետների պարզաբանումներից հետևում է, որ 100 տոկոսանոց ավտոմատացված համակարգով կառավարվող տեխնիկան միշտ չէ, որ արդարացնում է պահանջվող սպասելիքները, ուստի ոչ միայն Ժնևի, այլ Շվեյցարիայի մի շարք այլ քաղաքների թատերական կառույցներում ևս բեմական աշխատանքներն իրականացվում են մասամբ

ավտոմատացված կառավարվող համակարգերով: Այլ խոսքով, շվեյցարական բեմերի բնականոն աշխատանքն ապահովվում է ավանդականի ու մոդեռնի բավականին արդյունավետ համագործակցության միջոցով:

Ժնևի Մեծ թատրոնի կառույցն աչքի է ընկնում ոչ միայն քարշակային կառավարման ավտոմատացված այնպիսի համակարգով, ինչպիսին օգտագործվում է Լիոնի ազգային օպերայում, այլև բեմի հատուկ նախագծով, որի շնորհիվ բեմի ստորին հատվածում գտնվող չորս կամ հինգ պլատֆորմները հնարավորություն են տալիս հենց բեմի տակ, ցանկացած պահի օգտագործելու նպատակով պահել միանգամից համապատասխանաբար չորս կամ հինգ ներկայացումների համար նախատեսված դեկորներ (նկ.-եր 2 և 3): Այս տեխնոլոգիան նույնպես կառավարվում է համակարգչի միջոցով, թպետ որոշակի անհրաժեշտ պահին օգնության են հասնում նաև բեմի բանվորներն ու բեմական տեխնոլոգիայի կիրառումն ապահովող այլ մասնագետները (տես՝ Genfive Grand Theatre 2010):



նկ. 2



նկ. 3

Ֆրանսիայի ու Շվեյցարիայի մի շարք մշակութային ու դիտադահլիճային կառույցներ այցելություններից ու դիտարկումներից բացի, մեր կողմից որոշակի տեխնիկական ուսումնասիրություններ են կատարվել նաև բեմական այնպիսի շարժական ու տեղափոխվող տեխնոլոգիաների ոլորտում, որոնք կիրառվում են հիմնականում մշակութային արժեք ունեցող, սակայն բավականին հին կամ փլատակի վերածված կառույցներում ժամանակավոր ներակայացումներ կազմակերպելու նպատակով (տես՝ Actualité de la scénographie 2011:44-46):

Բեմական նման տեխնոլոգիաներ՝ նախատեսված հավաքովի ու տրանսֆորմացվող բեմերի համար, ՀՀ-ում նույնպես օգտագործվել են (Զվարթնոց տաճարի հայտնի օրինակը), նպատակաուղղված լինելով ժամանակավոր բացօթյա բեմական կառույցներ ստեղծելուն: Այնուամենայնիվ, մեկ կամ երկու

մողեւներ ստեղծելով և կիրառելով չի լուծվում ուսումնասիրությունների գլխավոր խնդիրը՝ զարգացնել ՀՀ դիտադաշիլիճային շինությունների բեմական հատվածներն ու տեխնոլոգիաները, իսկ այն տեխնիկան ու տեխնոլոգիաները, որոնք օգտագործվում են եվրոպական մի շարք երկրների դիտադաշիլիճային կառույցներում (Լիոնի ազգային օպերա, ժնևի ու Գրենոբլի թատրոններ) ուղղակի անհնարին է կիրառել ՀՀ նմանատիպ կառույցներում՝ բացառությամբ Հայաստանի ազգային օպերայի: Նման տեխնոլոգիաները չափազանց ծավալուն են ՀՀ այնպիսի թատերական կամ դիտադաշիլիճային շինությունների համար, ինչպիսիք են օրինակ Երևանի դրամատիկական կամ Կամերային թատրոնները, Նոր Նորքի «Արյաց տունը» և այլն:

Լուծելու համար ՀՀ դիտադաշիլիճային կառույցների բեմական մասերի ու տեխնոլոգիաների անհապաղ մոդեռնիզացման խնդիրը, սույն ուսումնասիրության շրջանակներում առաջարկում ենք անհրաժեշտաբար օգտագործել, ինչպես նաև զարգացնել դեռևս 1960-ական թվականներին Ֆրանսիայում հայտնի բեմական ներկայացումների ու տեխնոլոգիաների մասնագետ Ժակ Պոլիերի մեթոդը, որը նախատեսված է հիմնականում փոքրամասշտաբ դիտադաշիլիճային կառույցների բեմական հատվածների մոդեռնիզացում (Corvin et Ancel 2004): Պոլիերի տարբեր քաղաքների թատերական շենքերի բեմական հատվածներում կատարած աշխատանքների մանրակրկիտ ուսումնասիրությունը հնարավոր կդարձնի նրա փորձն ու մեթոդները կիրառել և նույնիսկ զարգացնել՝ նպատակ ունենալով արդիականացնել ՀՀ դիտադաշիլիճային շինությունների բեմական հատվածները:

Տրանսֆորմացվող պլատֆորմներ ու բեմական մասեր, նստատեղերի ու բեմական հատվածների զուգահեռ ավտոմատացված համակարգ ու դրանց տեղերի զուգահեռ դիրքափոխում՝ մոդեռնիզացիայի միայն այս եղանակներով հնարավոր կլինի հասնել բեմական տեխնոլոգիաների առաջադեմ համակարգի: Ժամանակն է հրաժարվել «սովետական» ժամանակաշրջանի հայտնի սահմանափակ ու «քառակուսի» բեմական նախագծերից և ստեղծել ժամանակին համընթաց, նոր բեմական տեխնոլոգիաներ: Միայն այս ձևով է հնարավոր մոդեռնիզացնել ՀՀ դիտադաշիլիճային շինությունների բեմական հատվածները՝ զարգացնելով նաև արդեն իսկ հայտնի 3D բեմականացումների տարբերակը:

1. *Actualité de la scénographie*. Nantes, 2011
2. Corvin Michel et Ancel Franck *Autour de Jacque Polieri, Scénographie et technologie*. Rennes, 2004.
3. *Coupe transversal, longitudinal, plan de base*. Genève: Genève Grand Théâtre. 2010.
4. Diderot & d'Alembert *Théâtres, machines de théâtre*". Paris, 2004. Nancy. 2004.
5. Garbagnati, Lucile et Morelli, Pierre *Théâtre et nouvelle technologies*. Dijon: Editions Universitaires de Dijon, collection écritures, 2006.
6. *Opéra National de Lyon*. Lyon: Opéra de Lyon, 2011.
7. Ponzio Jean-Luc, *Opéra de Lyon. Notice utilisation cintre*. Lyon, 2011.

Stage Technologies in France and Switzerland

The paper focuses on the study of French and Swiss theatrical stage technologies which, being quite advanced, can be further applied in Armenia to modernize not only theatrical but also many other stage sections of various premises which have not been reconstructed and updated for at least 40 years. The observations have been carried out in the above mentioned countries taking into account their past and present experience in changing and modernizing stage technologies at a steady and quick rate.